

## ԳԵՂԱԳՐՈՒՂԻ ԱԼԻԾ ՏԱՐՍՈՆԱՑԻ

Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՏԱՆ

Առհասարակ մեծ է հայ կնոջ դերը մեր հին ու միջնադարյան մշակութի-  
ստեղծման և զարգացման գործում: Գեղագրության և զարգագրության բնա-  
գավառում, օրինակ, անզուգական հռչակ ու սեր է վայելել Ալիծ Տարսոնա-  
ցին: Ցավոք, նրանից ոչինչ չի հասել մեզ կամ եթե հասել է՝ առայժմ մնում է  
անծանոթ: Կցկտուր են նաև մեր գիտելիքները նրա կյանքի ու գործի մասին:  
Եղածն էլ հատուկ ուշադրության առարկա չի դարձել:

Գեղագրուհի Ալիծին վերաբերող միակ և հավաստի վկայությունը պահ-  
պանվել է Ղ. Ալիշանի «Սիսուան» աշխատությունում: Այն քաղված է միջնա-  
դարյան մի կորած երկից, ուր ասված է. «... էր կոյս մի ի Տարսոն, և անունն՝  
Ալիծ. որ և նա էր գրագիր յայժմ հնուա. գրեաց զայբուբենս և ասաց, թէ՛ Ով ոք  
որ սմա նմանեցրնէ, նա է իմ տեսոյն արժանի: Որ և դրեալ՝ բերին զերկուքն.  
ոչ հաւանեալ ասէ.

Մայրն Զա-յին, ծակրն Մա-յին  
Զի՛ նրմանիր գիրն Ալիծին:

Եւ դարձեալ ասէ վասն ուզողացն, թե ով որ գրէ

Զծայրն Զա-յին, զծակրն Մա-յին,  
Նա կու լինի փեսայ Ալիծին:

Եւ ոմն ի նոցանէ գրեալ եղիր. և հաւանեալ ասէ.

Մայրն Զա-յին, ծակրն Մա-յին  
Կու նրմանի գիրն Ալիծին...»:

Շարունակությունից իմանում ենք, որ Ալիծին տեսնելու համար Կիլիկիա-  
նն մեկնում անգամ Արևելյան Հայաստանից և, հիացած նրա շնորհքով, աս-  
ում. «Իրաւի է զոր լուաքն, և այլ աւելի»<sup>1</sup>:

Ո՞վ է եղել այս հմուտ գեղագրուհին:

Անցյալ դարի կեսերին ուշադրության արժանացավ նույն Տարսոն քաղա-  
քում գտնված մի տապանաքար, որի տակ հանգչողը ևս կոչվել է Ալիծ: Անվանի-  
բանասեր Վ. Հացունին, քննելով հայ կնոջ պատմական դերը, անդրադարձավ  
այդ տապանաքարին և նկատի առնելով նրա թվականը (1316), գրեց. «Թվա-  
կանդ (1316) չի հարմարիր մեզ ծանոթ Ալիծներուն, բացի տարսոնացի կու-  
սեն՝ որ անթվական է, և հայտնի դեմք մ՝ էր դարձած...»<sup>2</sup>: «Տարսոնացի կույս»

1 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 520:

2 Վ. Հացունի, Հայուհին պատմության առջև, Վենետիկ, 1936, էջ 353:

ասելով վ. Հացունին նկատի ունեւր գեղագրուհի Ալիծին: Հիրավի, ուշադրութեան արժանի կռահում, որովհետեւ և՛ գեղագրուհին, և՛ տապանաքարի ատիրուհին» եղել են մեծարված տարսոնուհիներ՝ ապրած նույն ժամանակներում:

Ղ. Ալիշանը, խոսելով վերոհիշյալ տապանաքարի մասին, հակված էր մտածելու, թե նրա տակ կարող էր հանգչած լինել Հեթում Երրորդ թագավորի Ալիծ անունով դուստրը, որն ամուսնացած էր Կիպրոսի արքունիքում ծառայող մի բարձրաստիճան պալատականի հետ<sup>3</sup>: Ըստ այդմ էլ, ծնվեց մի ուրիշ կարծիք, որի համաձայն գեղագրուհին պիտի Հեթում Երրորդի այգ դուստրը լիներ<sup>4</sup>:

Իրերի այս դրութեան մեջ է ահա, որ կամենում ենք շրջանառութեան մեջ ղնել նոր փաստեր, որոնք կարող են օգտակար լինել խնդրի լուծման գործում: Իրանցից առաջինը պահպանվում է Երուսաղեմի հայոց Մատենադարանի № 1776 ձեռագրում: Այն Ալիծի տապանաքարի ընդօրինակութեաններից մեկն է՝ այսպիսի ծանոթութեամբ. «Տարսոնու. Սբ. Եկեղեցոյն դրան վեմի բարաւորին գրեալ կայ յիշատակարան Հեթում թագաւորի դստերն-զԱլիծին»<sup>5</sup>: Այս վկայութեանը, սակայն, գալիս է XIX դարից և պատմական հիմք ու արժեք չունի:

Հաջորդ փաստը պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 7709 ձեռագրում (թերթ 161բ), որն ընդօրինակված է Ղրիմում՝ XVII դարի առաջին կեսին: Նախագաղափարն, անշուշտ, եկել է Կիլիկիայից և պատկանել է ավելի վաղ ժամանակների: Այստեղ էլ գործ ունենք Ալիծի տապանագրի ընդօրինակութեան հետ, որը մեզ հայտնի բոլոր ընդօրինակութեաններից ամենահինն է և մինչև օրս չի արժանացել մասնագետների ուշադրութեանը: Առավել կարևորն այն է, որ այստեղ առկա ծանոթագրութեան համաձայն, Ալիծը ոչ թե Հեթում Երրորդի, այլ Լևոն Երրորդի դուստրն է: Ահա այդ մեծարժեք ընդօրինակութեանը.

Որ վասն անշափ սիրոյ քո[յ]ին  
 Բանդ ի կուէն առեր մարմին,  
 Աղաչանաք Աստուածածնին,  
 Թո՛ղ ըզյանցանսըն զԱլիծին,  
 Յոր և հանդեաւ ի մեծ թվին  
 ՉԿՆ-ին [եօթն հարիւր վաթսուն հնգին=1316].  
 Յորժամ գայցես յաշխարհ կրկին՝  
 Յարոյ զսա փառաւք քոյին:

Չեռագրից-ձեռագիր անցնելով սույն տապանագիրը մասամբ աղճատվել է. առաջին տողի «քոյին»-ը դարձել է «քոին», չորրորդ տողի «զԱլիծին»-ը՝ «Ձալիցին», վեցերորդ տողի «ՉԿՆ-ին»-ը՝ «ՉԿԼ-ին»: Դրանք մեր ներկայացրած բնագրում ուղղված են ըստ նույն տապանագրի ուրիշ ընդօրինակութեանների: Ինչ վերաբերում է ծանոթագրութեանը, ապա այն կցված է

<sup>3</sup> Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 272:

<sup>4</sup> Հ. Տ.-Ղ ա գ ա Ր յ ա ն, Հայկական Կիլիկիա, Անթիլիաս, 1966, էջ 22, 211:

<sup>5</sup> Ն. Պ ո ղ ա Ր յ ա ն, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, Զ, 1972, էջ 119:



վերջին տողին և ասում է. «Ուսանաւորք Լէոն թագաւորի դստերն զԱլիծին» (այստեղ էլ՝ սխալմամբ՝ «զԱլիցին»): Ելնելով 1316 թվականից, պիտի կարծել, որ խոսքը Լեոն Երրորդ թագավորի մասին է:

Բարեբախտաբար կան փաստեր, որոնք անառարկելի են դարձնում այս կարծիքը: Խոսքը՝ գրող Րաֆֆուն ստեղծած և այժմ Բրիտանական թանգարանում պահվող № 01—5458 ձեռագրում եղած այն վկայության մասին է, որն ասում է. «Ի թվին ՉԼԷ (1288) ծնաւ դուստր թագաւորին Ալիծն»<sup>6</sup>: Քանի որ 1288 թ. թագավորում էր Լեոն Երրորդը, ուստի այս Ալիծը նրա նորածին դուստրն է եղել: Ուշագրավ է նաև հետևյալ վկայությունը. «Ի սոյն ամի (ՉՆԷ—1308) գնաց Օշին թագաւորն ի Թավրէժու դանն վասն երկրիս կարեց, որ և ար(ար) խնամութիւն ընդ Գորգէն թագաւոր վրաց ու այրին պոմն թուփ ատջի ղանին, ղԴաւիթ որդի Վրաց թագաւորին ի հետ տամուծել Ալիծին փոքր քորն Օշին թագաւորին, ու եքեր զԴաւիթն ի հետն ու ի թուին ՉԼԷ (1311) արար հարսնիք ի Ղ (6) յունուարն ի Տարսուս...»<sup>7</sup>: Այստեղից իմանում ենք, որ Հայոց Օշին թագավորն իր փոքր քորը՝ Ալիծին 1308 թ. նշանում է վրաց արքային Դավիթի հետ և 1311 թ. կազմակերպում հարսանիք՝ Տարսոնում: Քանի որ Օշին թագավորը Լեոն Երրորդի որդին էր, հետևապես նրա փոքր քույր Ալիծն էլ Լեոն Երրորդի դուստրն է եղել: Նկատենք միայն, որ այս Ալիծը ծնվել է ոչ թե Լեոն Երրորդի կին Կեոան թագուհուց, այլ վերջինիս մահից (1285 թ.) 3 տարի հետո՝ մեզ առայժմ անծանոթ մի ուրիշ կնոջից:

Այսպիսով, պարզվում է, որ Տարսոնում դտնված տապանաքարի տակ հանգչելիս է Լեոն ոչ թե Հեթում Երրորդի, այլ Լեոն Երրորդի դուստր Ալիծը (1288—1316): Ուստի, Վ. Հացունու կարծիք-կոահումի համաձայն, գեղարուհի Ալիծը Լեոն Երրորդի վերջին դուստրն է: Այժմ՝ այդ կարծիքի օգտին վկայող հետևյալ անուղղակի փաստերի մասին:

Ինչպես տեսանք, գեղարուհի Ալիծն ունեցել է նաև բանաստեղծական սրբանշնորհք. այդ են վկայում փեսացուներին հասցեագրված նրա տողերը.

Ձծայրն Ձա-յին, ծակըն Մա-յին,  
Նա կու յինի փեսայ Ալծին...

Կարծում ենք, որ բանաստեղծական ընդունակություն է ունեցել նաև արքայադուստր Ալիծը, որի վկայությունն է № 7709 ձեռագրի «Ուսանաւորք Լէոն թագաւորի դստերն զԱլիծին» նշումը: Հոգնակիրաբար օգտագործված «Ուսանաւորք» բառը թույլ է տալիս տապանազրից բացի մտածելու նաև ուրիշ ոտանավորի կամ ոտանավորների մասին, որոնց հեղինակն է եղել Ալիծը: Հիրավի, հենց այդ տապանազրից առաջ, որպես նրա սկիզբը, առկա է հետևյալ քառատողը.

Ողջուն սիրոյ առ ձեզ հասցէ  
Ի հեռուստ այսմ աշխարհէ.  
Սկըսիմ խաւսել զոր միտս բաւէ,  
Ձքեզ գովել փոքր ի շաւէ:

<sup>6</sup> «Պատմա-բանասիրական հանդես», Երեւան, 1963, № 4, էջ 191:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 198:

Նման երկու քառատող էլ կա նույն ձեռագրի մի այլ թերթում, որոնք բոլորը միասին առկա են նույն գրչի ընդօրինակած մի ուրիշ՝ № 3206 ձեռագրում (թերթ 157ա)։

Արդյո՞ք «Ոտանաւորքի» մեջ նաև այս տողերը չեն մտնում, մանավանդ որ դրանք էլ շարադրված են տապանագրի լեզվով և տաղաչափությամբ։ Ասենք, որ այդ բոլորն էլ «բանաձևեր» են։ Հարց է առաջանում. սկզբնապես նման բանաձև չի՞ եղել նաև տապանագիրը՝ գրված հենց Ալիծի կողմից, և այս պատճառով չէ՞, որ № 7709 ձեռագրում դրանք կոչվում են «Ոտանաւորք... դԱլիծին»։ Նշենք, որ Ալիծից առաջ նման տապանագիր հայտնի չէ, մինչդեռ նրանից հետո շատերն են օգտագործել այն՝ մասնակի հարմարեցումներով<sup>6</sup>։ Արքայադուստր Ալիծի անվան հետ կապվող այդ ոտանավորները, ինչպես նաև գեղագրուհի Ալիծից պահպանված շափածո փշրանքները թե՛ լեզվով, և թե՛ տաղաչափությամբ համապատասխանում են միմյանց և կարող էին նույն գրչից ծնված լինել։

Կարծում ենք, որ արքայադուստր հիշատակները Կիլիկիայից Ղրիմ ևն հասել արքունական նշխարներ բովանդակող ինչ-որ աղբյուրից։ Դրա վկան է, օրինակ, Ալիծի հոր՝ Լևոն Նրրորդի մասին հյուսված ժողովրդական «Աւա՛ղ. գլէոնն ասեմ» երգի հազվագեպ ընդօրինակությունը՝ նույն № 7709 ձեռագրում (թերթ 93բ—94ա), որը միակն է մեր Մատենադարանի ձեռագրերում։

Գեղագրուհի Ալիծի և արքայադուստր նույնության օգտին է խոսում նաև գեղագրուհու այնքան շատ հոչակված լինելը, որն առանց մեծ ուսուցչապետի կամ դպրոցի չի կարող ենթադրվել։ Իսկ այդպիսի միջավայր կարող էր ստեղծած լինել Թորոս Ռոսլինը, որը սերտ կապերի մեջ էր Լևոն Նրրորդի ընտանիքի հետ։ Ըստ երևույթին, միայն փայլուն շնորհք քիչ էր, որպեսզի երկրի հեռավոր ծայրերից այցելության գնային Տարսոնացի Ալիծին։ Թվում է, թե արքունական ծագումն էլ մյուս կողմից է իր դերը խաղացել այդ գործում։ Նկատենք նաև, որ այդ զրույցը կրում է շափազանցման և արդեն գեղարվեստականացման ուղին բռնած փաստի կնիք։

Այս և այլ փաստերը թույլ են տալիս առայժմ պնդելու գեղագրուհի և արքայադուստր Ալիծների նույնության մասին եղած՝ կարծիքը, սպասելով նոր վկայությունների։

Այժմ մի երկու խոսք Ալիծի տապանաքարի տեսքի ու ձևկատագրի մասին։ Ականատես նկարագրողներից տեղեկանում ենք, որ այն սպիտակ ու ընտիր մարմարից կերտված հարթ ու քառանկյունի ցածրադիր գերեզմանաքար է՝ 1,44×0,44 մ մակերեսով, որի եզրերով անցնող շրջանագծում ընտիր բոլորագրով փորագրված է տապանագիրը, իսկ կենտրոնում՝ խաչաձև ծաղկազարդ է՝ ասես առնված ձեռագրային ծաղկանկարներից։ Նրանից վերև՝ վահանազարդ է (արքունական նշան)։ Ըստ երևույթին, տապանաքարը նմանեցված է կազմված փակ ձեռագրի։ Մոտավորապես այս ոճով է կերտված նաև XVII դ. անվանի գրիչ ու ծաղկող Նիկողայոս Մելանավորի տապանաքարը Ղրիմում։

Ալիծի տապանաքարը XIX դ. կեսերին գտնվելիս է եղել Տարսոնի ս. Աստվածածին (կոչվել է նաև ս. Պողոս) եկեղեցու պատի մեջ՝ դռան վերևում։

<sup>6</sup> Բ. Կյուրևսեյան, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո, Անթիլիաս, 1939, էջ 186—187։

Հավանաբար եկեղեցու վերանորոգման և շրջակայքի բարեկարգման ժամանակ այն տեղահանվել և հյուսվել է պատի մեջ, իսկ հետո այդտեղից տեղափոխվել է եկեղեցու բակը շրջափակող պարսպի «Հյուսիսային կողմը գրեթե 'ից պարսպին»: Այս անգամ արդեն այն ծառայել է որպես տապանաքար ոմն Գրիգոր վարդապետի «և անոր անունն ալ վրան փորագրած է մեջտեղը»<sup>9</sup>:

## КАЛЛИГРАФИСТКА АЛИС ТАРСОНАЦИ

А. Ш. МНАЦАКАНЯН

### Резюме

В столице Армянского киликийского царства Тарсоне, в XIII—XIV вв. жила и творила каллиграфистка по имени Алис. Специалисты отождествили ее с некоей Алис, которая была похоронена в Тарсоне в 1316 г. Последняя в свою очередь была отождествлена с дочерью армянского царя Гетума III по имени Алис. Однако Алис была дочерью не Гетума III, а Левона III. В одной из рукописей Матенадарана (№ 7709), написанной в XVII в., записана надгробная надпись с могилы Алис, с соответствующими комментариями. На основании этого и других материалов остается предположить, что известная каллиграфистка по имени Алис была дочерью армянского царя Левона III.

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 186:

Ը